ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

№ 12/08

Քաղ. Երևան 26 մայիսի 2008թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Բ.Շ. Վարդանյան, Գ.Հ.Ադամյան, Ա.Ա.Տոնիկյան և Ա.Վ.Բաբայան, քարտուղար՝ Լ.Ե.Ասցատրյան, իր 2008թ. մայիսի 26-ի նիստում (արձանագրություն № 61/5) քննարկեց ՀՀ հավատարամատար Զ.Մանուկյանի 2008թ. ապրիլի 1-ի դիմումը HLH LLC (GB) ընկերության «BARTON» (ՀՀ վկ.դ6789) բառային ապրանքային նշանի գրանցման գործողությունը չօգտագործման պատճառով ԱԾՄԴ-ի 34-րդ դասի բոլոր գրանցված ապրանքների համար վաղաժամկետ դադարեցնելու խնդրանքով:

Դիմողի փաստարկները հետևյալն են:

Դիմողը դիմումում նշել է, որ իր ընկերության կողմից Հայաստանի Հանրապետությունում կատարված մարքետինգային ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ հայկական շուկայում չկա «BARTON» (ՀՀ վկ.դ6789) ապրանքային նշանով մակնշված ոչ մի ապրանք: Ապրանքային նշանի սեփականատեր HLH LLC (GB) ընկերությունը գրանցման պահից սկսած ՝ ավելի քան 5 տարի, այն չի օգտագործել և չի օգտագործում ԱԾՄԴ-ի 34-րդ դասում գրանցված ապրանքների համար: Ելնելով դրանից և հիմք ընդունելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքի ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև օրենք) 22-րդ հոդվածի 4-րդ մասը, դիմողը խնդրել է «BARTON» (ՀՀ վկ.դ6789) բառային ապրանքային նշանի գրանցման գործողությունը Հայաստանի Հանրապետության տարածքում ԱԾՄԴ 34-րդ դասի բոլոր գրանցված ապրանքների համար վաղաժամկետ դադարեցնել:

Բողոքարկման խորհուրդը «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 34-րդ կետի համաձայն 04.04.08թ. հետծանուցմամբ փոստային առաքմամբ ծանուցել է «BARTON» (ՀՀ վկ. դ6789) ապրանքային նշանի սեփականատեր HLH LLC (GB) ընկերությանը (HLH LLC Grosvernor Court, Albert Road Ramsey, Isle of Man, England) բողոքարկման խորհրդի կողմից 2008թ. ապրիլի 1-ի ՀՀ

հավատարամատար Զ.Մանուկյանի ներկայացված դիմումը քննարկման ընդունելու, նիստի անցկացման թվականի (2008թ. մայիսի 27), ՀՀ արտոնագրային հավատարմատարի միջոցով դիմումի վերաբերյալ իր առարկությունները նիստի անցկացման օրվանից ոչ ուշ քան 10 օր առաջ ներկայացնելու և իր շահերը պաշտպանելու մասին:

Ըստ 21.04.08թ. գործակալության ստացված հետծանուցման, հասցեատիրոջ կողմից ծանուցումը ստացվել է, սակայն 2008թ. մայիսի 26-ի բողոքարկման խորհրդի նիստին սեփականատիրոջ որևէ ներկայացուցիչ չի ներկայացել, ինչպես նաև սեփականատիրոջից որևէ գրավոր արձագանք բողոքարկման խորհուրդը չի ստացել:

Դիմումում բերված հիմնավորումների շրջանակներում քննարկելով ներկայացված նյութերը, ինչպես նաև հաշվի առնելով նիստում դիմումի ըստ էության քննարկման արդյունքները և այն փաստը, որ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին պարբերության համաձայն ապրանքային նշանի օգտագործման ապացույցները պետք է ներկայացնի դրա սեփականատերը, տվյալ դեպքում՝ HLH LLC (GB) ընկերությունը, որը պատշաճ ծանուցված է եղել, սակայն 2008թ մայիսի 26-ի բողոքարկման խորհրդի նիստին չի ներկայացել և օգտագործման որևէ ապացույց չի ներկայացրել, ինչից կարելի է եզրակացնել, որ ընկերությունը «BARTON» (ՀՀ վկ. դ6789) ապրանքային նշանը չի օգտագործել Հայաստանում, բողոքարկման խորհուրդը համարում է, որ նշված ապրանքային նշանը չօգտագործելու վերաբերյալ ՀՀ հավատարամատար Զ.Մանուկյանի դիմումում բերված փաստարկները հերքելու հիմքեր չկան, և դիմումը ենթակա է բավարարման:

Ելնելով դրանից և ղեկավարվելով օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 79-րդ կետի «ա» ենթակետով, բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել ՀՀ հավատարամատար Զ.Մանուկյանի 2008թ. ապրիլի 1-ի դիմումը ամբողջովին և HLH LLC (GB) ընկերության «BARTON» (ՀՀ վկ.դ6789) ապրանքային նշանի գրանցման գործողությունը վաղաժամկետ դադարեցնել Հայաստանի Հանրապետության տարածքում՝ ԱԾՄԴ-ի 34-րդ դասի բոլոր գրանցված ապրանքների նկատմամբ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան